



# ՄՈՒՐԲ ՅԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԽԿԵՂԵՅԻ



### ԴԱՏԱԽՈՐԻ ԿԻՐԱԿԻ

22 ՄԱՐՏ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Աղօթարան	Էջ 4
Խնդրել եւ Փնտռել	Էջ 4
Նեղ Դուռը	Էջ 6
Ծանուցում	Էջ 7

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐԲԷՆ (65.8-25)

**Տ**էրը այսպէս կ'ըսէ. - «Այնպէս ինչպէս երբ ողկոյզին վրայ խաղողի ճիւղ մը մնացած ըլլայ՝ կ'ըսեն. «Մի՛ նետեր ողկոյզը, որովհետեւ անոր վրայ Տիրոջ օրհնութիւնը կայ», այնպէս ալ ես իմ ծառայիս սիրոյն պիտի խնայեմ եւ կորուստի պիտի չմատնեմ բոլորը: Յակոբի որդի Յուդայէն սերունդ մը պիտի հանեմ, որ իմ սուրբ լեռս պիտի ժառանգէ. իմ ընտրեալներս զայն պիտի ժառանգեն եւ իմ ծառաներս այնտեղ պիտի բնակին: Զիս փնտռող ժողովուրդիս համար Սարոնը հօտերու արօտավայր պիտի ըլլայ եւ Աքորի ձորը՝ նախիրներու հանգստավայր: Իսկ ձեզ որ զիս թողուցիք, իմ սուրբ լեռս մոռցաք, բախտի կուռքին սեղան կանգնեցիք եւ ձակատագրի չաստուծոյն գինի ընծայեցիք, ձեզ սուրի պիտի մատնեմ եւ բոլորդ պիտի կոտորուիք, որովհետեւ կանչեցի ձեզ եւ չլսեցիք, խօսեցայ եւ մտիկ չըրիք. ըրիք այն ինչ որ չար է իմ աչքիս, ընտրեցիք այն ինչ որ կամքիս հակառակ է»:

Ուստի այսպէս կ'ըսէ Տէրը.-

«Ահա ահա սիկ, ինծի ծառայողները պիտի կշտանան, մինչ դուք անօթի պիտի մնաք. ինծի ծառայողները պիտի յագենան, մինչ դուք ծարաւ պիտի մնաք. ինծի ծառայողները պիտի ուրախանան, մինչ դուք ամօթով պիտի մնաք. ինծի ծառայողները սրտի ուրախութեամբ պիտի ցնծան, իսկ դուք ձեր սրտին ցաւէն պիտի աղաղակէք, անյոյս հօգիտով պիտի ողբաք, որովհետեւ իմ ընտրեալներս նգովքի տեղ ձեր անունը պիտի գործածեն, եւ ես՝ Տէրս ձեզ մահուան պիտի մատնեմ: Մինչդեռ իմ ծառաներուս պիտի տամ նոր անուն մը, որպէսզի երկրի վրայ այդ անունը օրհնողը ճշմարիտ Աստուծոյ վրայ երդուած ըլլայ: Արդարեւ, իմ ընտրեալներս պիտի մոռնան իրենց կրած նեղութիւնները,

եւ ա՛լ երբեք պիտի չխշեն զանոնք: Որովհետեւ ահա ես նոր երկինք եւ նոր երկիր պիտի ստեղծեմ. ա՛լ պիտի չխշեն նախկինները, բնաւ պիտի չմտաբերեն զանոնք: Իմ նոր ստեղծագործութեան մէջ անոնք միայն ցնծութիւն եւ ուրախութիւն պիտի գտնեն, որովհետեւ ահա ես Երուսաղէմը ցնծութեան վայր պիտի դարձընեմ եւ պիտի ուրախացնեմ իմ ժողովուրդս: Եւ ես պիտի ցնծամ Երուսաղէմի համար, պիտի ուրախանամ իմ ժողովուրդիս համար: Այնտեղ բնաւ լացի եւ ողբի ձայն պիտի չլսուի: Այնտեղ անժամանակ մահեր տեղի պիտի չունենան, պիտի չգտնուի ձեր մը որ իր օրերը ապրած չըլլայ. հարիւր տարեկան եղողը երիտասարդ տղայ պիտի նկատուի, իսկ հարիւրամեայ մեռնողը մեղաւոր եւ անիծեալ պիտի համարուի: Իրենց շինած տուներուն մէջ իրե՛նք պիտի բնակին, իրենց տնկած այգիներուն պտուղը իրե՛նք պիտի վայելեն. եւ ոչ թէ իրենք շինեն ու թշնամիներ բնակին կամ իրենք տնկեն եւ ուրիշներ վայելեն: Որովհետեւ կեանքի ծառին պէս անվախճան պիտի ըլլայ իմ ժողովուրդիս կեանքը. իմ ընտրեալներս երկա՛ր պիտի վայելեն իրենց ծանր աշխատանքին վաստակը: Այլեւս զուր տեղ պիտի չաշխատին ու դժբախտ գաւակներ պիտի չծնին, որովհետեւ Աստուծոյ օրհնուած սերունդ մը պիտի ըլլան թէ՛ իրենք եւ թէ՛ իրենց գաւակները: Տակաւին իրենք չկանչած՝ պիտի լսեմ զիրենք. դեռ իրենց աղօթքը չաւարտած՝ պիտի հարցնեմ. «Ի՞նչ կ'ուզէք»: Այն ատեն գայլն ու գառը միասին պիտի ճարակին. առիւծը եզան պէս յարդ պիտի ուտէ եւ օձը հողով պիտի սնանի. ոեւէ մէկուն պիտի չզպչին եւ պիտի չվնասեն իմ սուրբ լեռանս վրայ», - կ'ըսէ Տէրը:

ահա ես նոր երկինք եւ նոր երկիր պիտի ստեղծեմ. ա՛լ պիտի չխշեն նախկինները, բնաւ պիտի չմտաբերեն զանոնք:

կեանքի ծառին պէս անվախճան պիտի ըլլայ իմ ժողովուրդիս կեանքը. իմ ընտրեալներս երկա՛ր պիտի վայելեն իրենց ծանր աշխատանքին վաստակը:

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ  
ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(3.1-4.9)

Հետեւաբար, եղբայրներս, Տիրոջ մով  
Նուրախացէք: Նոյն բաները գրելը ինծի  
համար ձանձրոյթ է, բայց ձեզ ճշմարտութեան  
մէջ կը հաստատէ:

Զգուշացէք այն մարդոցմէ, այն շուններէն,  
որոնք չարիք կը սերմանեն՝ ստիպելով որ  
թլփատուիք: Իսկական թլփատուածները մենք  
ենք, որովհետեւ Աստուծոյ Հոգիով լեցուած  
պաշտամունք կը կատարենք եւ Քրիստոս Յիսուսի  
միացած ըլլալով միայն կը պարծենանք, եւ ոչ  
թէ Օրէնքի գործադրութեամբ կամ Աբրահամի  
մարմնաւոր զաւակը ըլլալով: Եթէ ատոնք  
բաւարար ըլլային փրկուելու համար, ինծի ոչինչ  
պիտի պակասէր. եւ եթէ ոեւէ մէկը կը կարծէ թէ  
մարմնական այդ կապին կրնայ վստահիլ, ես  
աւելիով կրնամ, քանի ութօրեայ թլփատուած  
խորայէլացի մըն եմ, Բենիամինի ցեղէն, զտարիւն  
եբրայեցի եւ օրինապահ փարիսեցի: Այնքան  
նախանձախնդիր էի, որ Քրիստոսի եկեղեցին կը  
հալածէի. եւ արդար էի այնքան՝ որքան օրէնքի  
անթերի գործադրութիւնը կրնար տալ: Սակայն  
այս բոլորը, որ ժամանակ մը առաւելութիւն  
կը սեպէի, հիմա վնաս կը համարեմ՝ Քրիստոսի  
սիրոյն համար: Եւ իրաւ,

ամէն ինչ վնաս կը  
համարեմ՝ համեմատած  
այն գերազանց շահին  
հետ, որ մեր Տէրը՝  
Յիսուս Քրիստոսը  
ճանչնալն է: Այդ  
գիտութիւնը ունենալու  
համար ամէն ինչ  
թողուցի, ոչնչութիւն  
սեպելով, որպէսզի  
Քրիստոսը շահիմ, եւ  
կատարելապէս անոր  
միանամ: Այնպէս որ,  
իմ արդարութիւնս  
այլ եւս օրէնքի

իմ արդարութիւնս  
այլեւս օրէնքի  
գործադրութեան  
չի գար, այլ  
Քրիստոսի  
հանդէպ ունեցած  
հաւատքէս, եւ այդ  
արդարութիւնը  
Աստուծմէ եկած  
արդարութիւնն  
է՝ հիմնուած  
հաւատքի վրայ:

գործադրութենէն չի գար, այլ Քրիստոսի հանդէպ  
ունեցած հաւատքէս, եւ այդ արդարութիւնը  
Աստուծմէ եկած արդարութիւնն է՝ հիմնուած  
հաւատքի վրայ: Հիմա միակ փափաքս է ճանչնալ  
Քրիստոսը, անոր յարութեան զօրութիւնը, եւ  
անոր չարչարանքներուն մասնակից դառնալ՝  
անոր մահուան օրինակը իմ վրաս առնելով,  
որպէսզի ես ալ արժանի ըլլամ մեռելներէն  
յարութիւն առնելու:

Զեմ ըսեր, թէ արդէն յաջողած եւ  
կատարելութեան հասած եմ, բայց հասնելու կը

ձգտիմ, որովհետեւ ճիշդ ատոր համար Քրիստոս  
Յիսուս զիս պահեց: Եղբայրներ, ինքզինքս դեռ  
կատարելութեան հասած

չեմ համարեր. բայց  
կ'աշխատիմ անցեալը  
մոռնալ եւ գալիքին  
նայիլ, եւ ուշադիր  
կերպով կը վազեմ դէպի  
նպատակակէտը, որպէս  
մրցանակ ստանալու  
համար յաւիտենական  
կեանքը, որուն կը  
հրաւիրէ մեզ Աստուծոյ,  
Քրիստոս Յիսուսով:

... կ'աշխատիմ  
անցեալը մոռնալ  
եւ գալիքին նայիլ,  
եւ ուշադիր  
կերպով կը  
վազեմ դէպի  
նպատակակէտը,  
որպէս մրցանակ  
ստանալու համար  
յաւիտենական  
կեանքը...:

Արդ, դուք բոլորդ  
որ կատարեալ էք՝ նոյն  
ձեւով խորհեցէք: Իսկ եթէ որոշ կէտերու շուրջ  
տարբեր կը խորհիք, Աստուծոյ ինք ձեզ պիտի  
լուսաբանէ: Ամէն պարագայի, միասնաբար  
քայլենք այն կանոններով, որոնցմով ընթացանք  
մինչեւ հիմա:

Եղբայրներ, ինծի նմանեցէք, եւ հետեւեցէք  
անոնց՝ որոնք ձեզի տուած մեր օրինակով  
կ'ընթանան: Որովհետեւ, ինչպէս յաճախ կ'ըսէի եւ  
հիմա եւս լալով կ'ըսեմ, մեր մէջ կան շատեր որոնց  
կեանքը թշնամանք է Քրիստոսի խաչին: Անոնց  
վերջը կորուստ է, որովհետեւ իրենց աստուածը  
իրենց փորն է. ամօթալի բաներով կը հպարտանան  
եւ միայն երկրաւոր բաներու մասին կը խորհին:  
Մենք, սակայն, երկիրքի քաղաքացիներ ենք եւ  
հոնկէ կը սպասենք որ գայ մեր փրկիչը՝ Յիսուս  
Քրիստոս, որ մեր մահկանացու մարմինները  
պիտի կերպարանափոխէ եւ իր մարմնին պէս  
փառաւոր դարձնէ իր զօրութեամբը, որով կրնայ  
ամէն ինչ իր իշխանութեանը ենթարկել: Ուստի,  
սիրելի եւ կարօտալի եղբայրներ, դուք որ իմ  
ուրախութիւնս էք եւ պսակս, այսպէս ամբօրէն  
Տիրոջ միացած մնացէք, սիրելիներս:

Եւ ողբայրի եւ Սիւնտիքին կ'աղաչեմ եւ կը  
թելադրեմ որ իրարու հետ հաշտուին, քանի  
Տիրոջ միացած են: Դուն ալ, ո՛վ հաւատարիմ  
գործակիցս, կը խնդրեմ որ օգնես այս երկու  
կիներուն, որովհետեւ ինծի հետ պայքարեցան  
Աւետարանի տարածման համար, Կղեմէսի եւ միւս  
գործակիցներու հետ միասին, որոնց անունները  
Կեանքի Գիրքին մէջ  
արձանագրուած են:

Միշտ ուրախ եղէք  
Աստուծոյ. դարձեալ  
կ'ըսեմ՝ ուրախ եղէք:  
Բոլորին հանդէպ հեզ  
եւ ազնիւ եղէք: Շուտով  
Տէրը կու գայ: Որեւէ բան թող չմտահոգէ ձեզ. այլ  
միշտ ձեր աղօթքներուն եւ աղաչանքներուն մէջ

Միշտ ուրախ  
եղէք Աստուծոյ.  
դարձեալ կ'ըսեմ՝  
ուրախ եղէք:

գոհունակ սրտով Աստուծո՞ւմէ խնդրեցէք ինչ բանի որ կարիքը կը զգաք, եւ այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ միտքով կարելի չէ հասկնալ, խաղաղ պիտի պահէ ձեր սիրտերն ու միտքերը, որոնք Քրիստոս Յիսուսի միացած են:

Ի վերջոյ, եղբայրներ, խորհեցէք այն բաները որոնք ճշմարիտ են, պարկեշտ, արդար, մաքուր, սիրելի, բարեհամբաւ, առաքինի եւ գովելի: Եւ գործքով կատարեցէք այն ինչ որ ինձմէ սորվեցաք եւ ընդունեցիք, ինձմէ լսեցիք եւ իմ վրաս տեսաք. եւ Աստուծո՞ւմ, որ խաղաղութիւնը կու տայ, ձեզի հետ պիտի ըլլայ:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ  
(17.20-18.14)**

**Փ**արիսեցիներ հարցուցին Յիսուսի թէ ե՛րբ պիտի գայ Աստուծոյ արքայութիւնը: Ան պատասխանեց. «Աստուծոյ Արքայութիւնը արտաքնապէս տեսանելի նշաններով պիտի չգայ. կամ պիտի չըսեն թէ “հոս է կամ հոն”, որովհետեւ ահա Աստուծոյ արքայութիւնը ձեր միջեւ կը գտնուի»:

«... ահա Աստուծոյ արքայութիւնը ձեր միջեւ կը գտնուի»:

Ապա իր աշակերտներուն ըսաւ. «Ժամանակ պիտի գայ, երբ դուք պիտի ցանկաք մարդու Որդիին այս օրերէն մէկը տեսնել, բայց պիտի չտեսնէք: Եւ եթէ ձեզի ըսեն “ահա հոս է կամ հոն”, մտիկ մի՛ ընէք, մի՛ հետեւիք անոնց: Որովհետեւ ինչպէս որ կայծակը փայլատակելով կը լուսաւորէ երկնակամարին մէկ կողմէն միւսը, նոյնպէս պիտի ըլլայ մարդու Որդին իր գալստեան օրը: Սակայն նախ պէտք է որ ան շատ չարչարանքներ կրէ եւ մերժուի այս սերունդէն: Ինչպէս որ Նոյի ժամանակ Աստուծոյ պատիժը յանկարծակի վրայ հասաւ, նոյնպէս պիտի պատահի մարդու Որդիին օրերուն ալ: Անոնք ալ կ'ուտէին, կը խմէին, այր կամ կին կ'առնէին, մինչեւ այն օրը, երբ Նոյ տապան մտաւ, եւ ջրհեղեղը բնաջնջեց զանոնք: Կամ ինչպէս Ղովտի օրերուն պատահեցաւ. կ'ուտէին, կը խմէին, կը գնէին, կը ծախէին, կը տնկէին եւ կը շինէին. բայց այն օրը երբ Ղովտ Սողոմը ձգեց, երկիրքէն կրակ եւ ծծումբ տեղաց եւ սպաննեց բոլորը: Նոյնը պիտի պատահի այն օրը երբ մարդու Որդին յայտնուի:

«Այդ օրը, ան որ տանիք ելած է՝ թող վար չիջնէ տան մէջ գտնուող իր գոյքերը առնելու համար: Նոյնպէս, ան որ դաշտին մէջ է՝ թող չվերադառնայ տուն

Ով որ կը ջանայ իր անձը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ կորսնցնէ իր անձը՝ պիտի փրկէ զայն:

ձգածները առնելու համար: Յիշեցէք Ղովտի կնոջ պարագան: Ով որ կը ջանայ իր անձը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ կորսնցնէ իր անձը՝ պիտի փրկէ զայն: Կ'ըսեմ ձեզի, այդ գիշեր եթէ մէկ անկողնի մէջ երկու հոգի ըլլան, անոնցմէ մէկը պիտի առնուի եւ միւսը ձգուի»: Աշակերտները հարցուցին Յիսուսի. «Տէ՛ր, ո՞ր պիտի պատահի ատիկա»: Ան պատասխանեց. «Արծիւները կը հաւաքուին հո՛ն ուր դիակ կայ»:

Յիսուս առակ մը խօսեցաւ իր աշակերտներուն, ցոյց տալու համար թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վհատելու: Եւ ըսաւ. «Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծո՞ւմէ կը վախնար եւ ոչ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ իրեն կը դիմէր եւ կը խնդրէր. “Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս”: Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն, “Թէեւ Աստուծո՞ւմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ”»: Ապա Տէրը շարունակեց. «Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: Իսկ Աստուծո՞ւմ որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան, պիտի չպաշտպանէ՞ զանոնք, որոնք գիշեր ու ցերեկ իրեն կը դիմեն: Այո՛, կ'ըսեմ ձեզի որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ: Բայց մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»:

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. “Աստուծո՞ւմ, շնորհակալ եմ քեզմէ՛” որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ”: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. “Աստուծո՞ւմ, ներէ՛ մեղաւորիս մեղքերը”: Կ'ըսեմ ձեզի,՝ եզրակացուց Յիսուս,՝ ո՛չ թէ փարիսեցին, այլ մաքսաւորը արդարացած գնաց տուն. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

«... ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

## ԱՂՕԹ-ԱՐԱՆ

Հեղինակ՝ ՀԱՄԱՍՏԵՂ  
ՀԱՏՈՒԾ՝ «ԱՂՕԹԱՐԱՆ» ՀԱՏՈՐԵՍ

Կը հաւատամ, որ կաս, Տէր, որովհետեւ կը զգամ քու շունչը ծաղիկներուն մէջ, որոնք բուրմունքներով կը մտածեն, կը տխրին ու կը ժպտին գոյներով:

Կը հաւատամ, երբ հասկը իր ցորենի հատիկները կը շարէ, երբ շերամը մետաքսի թելերով իր մթութիւնը կը հիւսէ՝ կերպարանափոխուելու եւ հասնելու թելերու կատարելութեան:

Կը հաւատամ, որ կաս, Տէր, որովհետեւ ամէն անգամ, երբ կը տեսնեմ ծիսական ցաթումը արեւին, իմ շրթներէն թիթեռնիկի թելերուն պէս թարմ ու մաքուր աղօթքի բառեր կը բարձրանան՝ հասնելու համար քեզի:

Օհ, օրհնութիւն արեւին, կանանչին, կապոյտին, սերմին ու պտղաբերութեան: Օրհնութիւն մօր ժպտին ու կնոջ սրբազան բեղմնաւորութեան: Օրհնութիւն արտերուն, համբաներուն ու փոքրիկներու հաճանչաւոր շարժումներուն: Օրհնութիւն ծառերուն, որոնք սերմի եւ ուղեղի թացութիւնով կը պտկին՝ ծաղկելու համար շունչովն Աստուծոյ:

Աստուածային ի՞նչ ուժ եւ ի՞նչ դիւցազներգութիւն, երբ յաւիտեանականութեան մը չափ անծանօթ մթութեան մէջ սերմը կը նեղֆուի հողին տակ ու ծիլը գետիկը կը նեղֆէ եւ կը բարձրանայ արեւին, կը բարձրանայ Քեզի, Տէր, որովհետեւ դուն ինքզնիքդ ես կեանքը բեղուն եւ Դուն կաս բոլորին մէջ:

Ու ես այդ բոլորով կառուցի իմ հոգիի ու մարմնի տանարը սրբազան:

Իմ մարմնի, իմ հոգիի, իմ տեսչանքներուն մէջ Դուն ինքզնիքդ կաս, Տէր, ու մենք իրարմով լրացած՝ միաւորած ենք մարդկայինն ու աստուածայինը:

Ես մաքուր պիտի պահեմ այդ տանարը: Պիտի վառեմ կանթեղներն ու ջահերը: Խնկամանին խունկն անպակաս պիտի ընեմ, Տէր, որ չըլլայ, չըլլայ օր մը հեռանաս ու լքես զիս:

Ինչքան ստեղծող Դուն իմ տանարին մէջն ես, իմ կեանքը միշտ գեղեցիկ պիտի ըլլայ: Ըլլայ ուրախութեան եւ տխրութեան պահերուն, պիտի զգամ Քու շունչն ու իմաստութիւնը, Տէր: Այնպէս պիտի զգամ, որ ես ինքս ալ կամ կանանչին, կապոյտին, բանին ու վանկին, բոլորին, բոլորին մէջ, ինչպէս Դուն ինքզնիքդ կաս:

Միայն Քեզմով, Տէր, Քեզմով է որ կը դառնամ լրիւ ու կատարեալ ու զիս հոն է, որ կ'առաջնորդես:

## ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ  
ԽԱՐԱԳՐ՝ ԳՈՒՆԵԿ Ք. Գ.

### Է

ԽՆԴՐԵԼ ԵՒ ՓՆՏՈՒԵԼ (7-12):

«Խնդրեցէ՛ք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտռեցէ՛ք եւ պիտի գտնէք, բաղխեցէ՛ք եւ պիտի բացուի ձեզի: Որովհետեւ խնդրողը պիտի ստանայ, փնտռողը պիտի գտնէ եւ բաղխողին առջեւ դուռը պիտի բացուի: Ձեր մէջ կա՞յ հայր մը, որուն զաւակը հաց ուզէ եւ ինք քար տայ անոր, եւ կամ օձ տայ՝ երբ զաւակը ձուկ խնդրէ: Արդ, եթէ դուք որ չար է՛ք՝ գիտէ՛ք ձեր զաւակներուն լաւ պարգեւներ տալ, ձեր երկնաւոր Հայրը որքա՞ն աւելի լաւ պարգեւներ պիտի տայ անոնց, որոնք իրեն կը դիմեն:

Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէ՛ք դուք անոնց. այս սկզբունքը իր մէջ կը խտացնէ Օրէնքն ու մարգարէներու ուսուցումները»:

*Հերան Քարոզը կամաց կամաց իր աւարտին է, որ կը հասնի: Եւ Յիսուսի խօսքերը որոշ ճշմարտութիւններ առաւել շեշտով մը կը պարզեն մեր դիմաց:*

*«Խնդրեցէ՛ք...փնտռեցէ՛ք...բաղխեցէ՛ք»:* Ի՞նչ բանի կը վերաբերին ասոնք: Նախ ըսեմ, որ այս հատուածը սերտօրէն կապուած է Տէրունական աղօթքին եւ կը կազմէ անով յայտնուիլ սկսած ոգիին ու բարոյականին եզրակացութիւնը:

*«Խնդրեցէ՛ք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի»:* Աստուծմէ խնդրանքը ուրիշ բան չէ քան՝ աղօթքը: Պարզ է, որ Աստուծմէ խնդրել կը նշանակէ՝ Աստուծոյ աղօթել: Յիսուս մեզի կ'ըսէ, որ Աստուած մեր աղօթքները կը լսէ եւ կը պատասխանէ մեր խնդրանքներուն, որովհետեւ Աստուած մեր բոլորին երկնաւոր Հայրն է:

Յիսուսի խօսքերը կեանքի փորձառութիւններուն վրայ կը հիմնուին: Այդ պատճառով ալ օրինակները շատ անմիջական են: Երկնաւոր Հօր հոգածութիւնը եւ առատաբաշխութիւնը բացատրելու համար, ան կը յիշեցնէ Հայրերուն հոգածութիւնը եւ խնամատարութիւնը: Թէեւ Հայրերը «չար» են, սակայն գիտեն իրենց զաւակներուն «լաւ պարգեւներ տալ»:  
(Անհաւանական չէ, որ Յիսուսի այս պատգամը սկզբնապէս իր մօտ հաւաքուած Հայրերու ուղղուած ըլլայ):

Արդեօք ի՞նչ ըսել կ'ուզէ Յիսուս, երբ Հայրերը «չար» կը կոչէ:

Ոմանք զայն բացատրած են աղամական մեղքին առնչելով: Բայց կը խորհիմ, որ ըսուածը կապ ունի այն հաստատումին հետ, թէ մարդուն սրտին խորհուրդը իր մանկութենէն չար է (Ծն

8.21): Թէեւ այս է իրականութիւնը, բայց հայրեր քար չեն տար իրենց զաւակներուն՝ երբ անոնք հաց կ'ուզեն, կամ օձ չեն տար՝ երբ անոնք ձուկ կը խնդրեն:

Իսկ ի՞նչ կը նշանակէ քար տալ կամ օձ տալ: Քար տալ կը նշանակէ անպիտան բան տալ, իսկ օձ տալ կը նշանակէ վնասակար բան տալ: Հայրերը միշտ օգտակար բան կու տան եւ կը սնուցանեն իրենց զաւակները: Արդէն այն հայրերը որ հակառակը կ'ընեն՝ հայրեր չեն:

Արդ, երբ հայրերը հոգածու եւ խնամատար են իրենց զաւակներուն հանդէպ, Երկնաւոր Հայրը որ բարութիւնն իսկ է՝ առաւել ու առաւել հոգատար է եւ առատօրէն ոչ թէ միայն խնամող, այլ նաեւ՝ նախախնամող:

Աղօթելը հիմնական արարքն է փնտռելու ընթացքին: Սակայն ի՞նչ փնտռելու մասին է խօսքը:

Ինչպէս խնդրելը Աստուծոյ կապուած է («Խնդրեցէ՛ք Աստուծմէ», կ'ըսէ), նոյնպէս փնտռելը Աստուծոյ կապուած է: Ի՞նչ է փնտռելին:

«Նեղ դուռը» անուանուած հատուածը սերտօրէն կապուած է այս հատուածին: Եւ անոր մէջ «գտնել» բայը կայ: Ի՞նչ գտնելու մասին կը խօսուի այնտեղ:

«Նեղ դուռը»:

Ապա կը բացատրուի, թէ անիկա դէպի կեանք կը տանի: Ետքը պիտի բացատրենք «նեղ դուռ»-ի իմաստը:

Հետեւաբար, ան որ աղօթելով կը փնտռէ դէպի կեանք տանող դուռը՝ պիտի գտնէ զայն, կ'ըսէ

Յիսուս: Այդ գտնելը, սակայն, մարդու ճիգին արդիւնքը չէ: Մարդը կը խնդրէ եւ կը փնտռէ, բայց Աստուած է, որ կու տայ: Աստուած է, որ արժանի կը դարձնէ այն դրան հասնելու, եւ անոր դիմաց կը կանգնեցնէ, որպէսզի

բախենք ու ինք անմիջապէս բանայ զայն:

Դէպի կեանք տանող դուռը փնտռելը արդեօք կրնա՞յ ուրիշ իմաստ մըն ալ ունենալ: 7.1-6 համարներուն գլխաւոր միտքը ներուժի մասին է: Արդեօք այս «Խնդրել եւ փնտռել» հատուածը կրնա՞յ ներուժի ալ վերաբերիլ: 12-րդ համարը այնքան բացայայտօրէն ցոյց կու տայ, թէ այս հատուածը ներուժի իմաստին ալ կապուած է: Այնտեղ գրուած է. «Ինչ որ կ'ուզէք, որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէ՛ք դուք անոնց»:

Մարդիկ երբ իրենք իրենց մասին կը մտածեն՝ ամէն բարիք կը կամենան: Բայց երբ ուրիշի մասին կը մտածեն՝ սահմանները շատ կը

նեղցնեն: Մարդիկ իրենք իրենց անձերուն ամէն տեսակի թոյլտուութիւն կ'ուզեն տալ եւ կու տան, սակայն երբ կարգը ուրիշին կու գայ, եւ ան պատիկ սխալ մը ընէ՝ կը դառնան անհանդուրժող եւ չեն ուզեր ներել:

Յիսուսի պատգամը միշտ ի մտի պէտք է ունենալ. «Ինչո՞ւ եղբօրդ աչքին մէջ եղած շիւղը կը տեսնես եւ չես անդրադառնար թէ աչքիդ մէջ գերան կայ: Կամ, ի՞նչպէս եղբօրդ կ'ըսես.՝ Ձգէ որ աչքիդ մէջ եղած շիւղը հանեմ.՝ երբ որ գերան ունիս աչքիդ մէջ»: Ներել ուրիշները, կը պատգամէ Յիսուս:

5.44-ի մէջ ան սորվեցուցած է ներել ուրիշներուն, նոյնիսկ եթէ անոնք մեզ չարչարող ու հալածողներ են, այլ նաեւ պատուիրած՝ աղօթել անոնց համար: Թէ ինչո՞ւ:

Որովհետեւ ներումը նախ եւ առաջ աղօթքի ճամբով կ'ըլլայ:

Ան որ կ'աղօթէ Աստուծոյ, ըստ Տէրունական աղօթքին, ներող պէտք է ըլլայ ուրիշներուն հանդէպ: Առանց ներող ըլլալու՝ ան չի կրնար աղօթել: Աստուծոյ ուղղւած որեւէ խնդրանք՝ ներողամիտ սրտէ մը պէտք է բխի, այլապէս այդ խնդրանքը տեղ չի հասնիր: Ան որ կեանքի տանող դուռը կը փնտռէ՝ որպէսզի կարենայ անոր արժանի ըլլալ՝ ներել պէտք է գիտնայ: Ան որ ներել չի գիտեր՝ իր փնտռտուքը ի զուր է. ան չի կրնար գտնել կեանքի տանող դուռը:

Ինչպէս խնդրելը եւ փնտռելը Աստուծոյ կապուած են, նոյնպէս բաղխելը Աստուծոյ կապուած է:

Գիտէ՛ք, որ բաղխել կը նշանակէ դուռը զարնել:

Ո՞ր դուռը զարնելու մասին է ըսուածը: Աստուծոյ դուռը: Այսինքն՝ այն դուռը՝ որ դէպի կեանք կը տանի:

Հիմա հարցը որ կրնայ դրուիլ սա է: Ե՞րբ է, որ պիտի բաղխենք Աստուծոյ դուռը: Այս գլխու 21-23 համարները եւ Տասը կոյսերու առակը (Մտ 25.1-13) մեզի կ'ըսեն, թէ

Մարդիկ իրենք իրենց անձերուն ամէն տեսակի թոյլտուութիւն կ'ուզեն տալ եւ կու տան, սակայն երբ կարգը ուրիշին կու գայ, եւ ան պատիկ սխալ մը ընէ՝ կը դառնան անհանդուրժող եւ չեն ուզեր ներել:

Ան որ կեանքի տանող դուռը կը փնտռէ՝ որպէսզի կարենայ անոր արժանի ըլլալ՝ ներել պէտք է գիտնայ:

ան որ աղօթելով կը փնտռէ դէպի կեանք տանող դուռը՝ պիտի գտնէ զայն...:

մեր կեանքին մէջ որպէսզի Աստուծոյ բաղխուած դուռը բացուի՝ ժամանակ մը կայ: Ե՞րբ է այդ ժամանակը:

Աստուածաշունչը կը հաստատէ, որ Աստուած տեւականօրէն պատրաստ է մեզ լսելու: Երբ որ ալ բաղխենք Աստուած պատրաստ է իր դուռը մեր առջեւ բանալու եւ մեզ ընդունելու: Բայց մարդուն պարագան նոյնը չէ: Մարդուն ժամանակը սահմանափակ է: Այսինքն՝ մինչեւ տեղ մը իրեն առիթ տրուած է, որ կարենայ Աստուծոյ դուռը բախել: Եթէ ան իրեն տրուած ժամանակը չ'օգտագործեր եւ չի բաղխեր՝ կ'մ դրան բացուիր շատ դժուար կ'ըլլայ կամ անկարելի կ'ըլլայ: Որովհետեւ՝

ա.- Մեր կեանքին սահմանը մենք չենք գիտեր: Անիկա անակնկալ կերպով կրնայ առնուիլ մեզմէ: Յիշեցէք Անմիտ մեծահարուստին առակը (Ղկ 12:16-21): Այն վայրկեանին, երբ ան կը կարծէ, թէ կատարելապէս հանգիստ եւ երջանիկ կեանք պիտի ունենայ՝ մահը իր վրան կը հասնի:

Մահը մերն է: Ամէն մարդ պիտի մեռնի եւ իր մահուան ո՛չ օրը գիտէ եւ ոչ ալ ժամը: Այս անգիտութիւնը՝ որպէսզի մարդը մնայուն կերպով արթուն եւ պատրաստ ըլլայ:

բ.- Յաճախ մենք կը կարծենք, որ բոլոր կարելիութիւնները ունինք: Երկար կեանք ունինք, եւ կրնանք մեր ուզած բանը՝ ուզած ատեննիս ընել: Բայց նոյնիսկ երկար կեանք ունենալը բաւարար չէ: Նոյնիսկ եթէ երկար կեանք ունենանք՝ արդեօք մեր մտային եւ հոգեկան վիճակը ինչպէ՞ս պիտի ըլլայ: Շատեր կան, որ կ'ապրին, եւ սակայն իրենց գիտակցութիւնը կորսնցուցած են: Ո՞վ կրնայ ըսել, թէ ինք՝ ե՞րբ ինչ վիճակի մէջ պիտի ըլլայ: Կեանքը այնպիսի անակնկալներով լեցուն է, որ մարդ չի կրնար գիտնալ, թէ վաղը ի՞նչ պիտի ըլլայ իրեն: Սակայն աւելի գէշը կայ տակաւին:

Աստուածաշունչը մեզի կ'ըսէ, թէ մեր հոգին մեր մարմինին պէս է: Մարմինը որքան երիտասարդ է՝ այնքան արթուն եւ զօրաւոր կ'ըլլայ զգալու իր կարողութիւնը: Որքան մարդու մի մէջ պահուի անիկա՝ արթնութիւնը կը տեւէ եւ մարմինը առոյգ կը մնայ: Բնական ընթացքն է նաեւ՝ որ տարիքին հետ եւ հիւանդութիւններուն բերումով՝ զգալու կարողութիւնը կը տկարանայ, նոյնիսկ կրնայ փթանալ: Այնպէս է նաեւ հոգին: Երբ հոգիի զգայարանները երիտասարդ են՝ աւելի արթուն եւ զօրաւոր կ'ըլլան, բայց ժամանակի ընթացքին՝ նոյնիսկ երբ հասած են զգալու բարձրագոյն կարողութեան՝ կը տկարանան եւ կը փթանան ալ:

Այն պահուն երբ հոգին իր արթնութիւնը կորսնցնէ՝ մարդ չի մտածեր դարձի մասին, եւ արդէն առ Աստուած դառնալու իր ոյժն ալ կորսնցուցած կ'ըլլայ: Եւ ան փախցուցած կ'ըլլայ Աստուծոյ դուռը բաղխելու առիթը:

Ուստի, ճիշդ այս պատճառով ալ մենք պէտք է գիտնանք յարմար ժամանակին

բաղխել Աստուծոյ դուռը:

Ինչպէս խնդրելը եւ փնտռելը ներելուն կապուած են, Աստուծոյ դուռը յարմար ժամանակին բաղխելն ալ ներելուն կապուած է: Մարդուն հոգին պէտք է աճի ներելու իր փորձառութեան մէջ. այն ատեն է, որ անոր կը մատուցուի առիթը՝ յարմար ժամանակին բաղխելու Աստուծոյ դուռը:

«Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէք դուք անոնց. այս սկզբունքը իր մէջ կը խտացնէ Օրէնքն ու մարգարէները»: Ասիկա «Ոսկեայ կանոն» կոչուած է: Այս համարը կ'ամփոփէ ընկերային ուղիղ յարաբերութեան մասին բաժինը, որ 6:19-7:11 կ'երկարի: Նաեւ կը յայտնէ ամբողջ Լեւրան Քարոզին գլխաւոր առաջադրութիւնը:

Ո՞վ կ'ուզէ, որ մարդիկ իրեն չարիք ընեն: Ոչ ոք: Հետեւաբար՝ ինքն ալ ուրիշներուն չարիք պէտք չէ ընէ:

Փոխանակ չարիք ընելու՝ ներէ՛ անոնց թերութիւնները, եւ այնպէս ըրէ՝ որ բարիքը կամ բարեգործութիւնը տարածուի իր կեանքին մէջ:

Երբ Յիսուս կ'ըսէ, թէ «այս սկզբունքը իր մէջ կը խտացնէ Օրէնքն ու մարգարէները», սքանչելիօրէն կը համառօտէ Հին Կտակարանի բուն ոգին, որ չարիքին՝ չարիքով հակազդելու գաղափարին հետ որեւէ կապ չունի, այլ չարիքին՝ բարիով ու բարի գործով պատասխանելու սկզբունքն է:

Նեո դոմո (13):

«Մտէ՛ք նեղ դռնէն, քանի կորուստի տանող դուռը լայն է եւ ճամբան՝ ընդարձակ, եւ շատեր կը մտնեն անկէ: Մինչ դէպի կեանք տանող դուռը նեղ է եւ ճամբան դժուարին, եւ քիչեր միայն կը գտնեն զայն»:

Ի՞նչ ըսել կ'ուզէ Յիսուս «նեղ դուռ» պատկերով, եւ ի՞նչ ըսել կ'ուզէ «լայն դուռ» պատկերով:

Անոնք որ դէպի կեանք տանող ճամբան կը տենչան մտնել՝ պէտք է որ առաքինի կեանք ապրին եւ իրենց օրերը լեցնեն բարի գործեր կատարելով:

Առաքինի կեանքին ձեւով մը մանիֆեստն է «Հայր մեր»ը: Անիկա յանձնառութեան մանիֆեստ մըն է, որ ունի իրարու սերտօրէն առնչուած երկու եզրեր. մէկը Երկնաւոր Հայրն է, միւսը՝ մարդկային ընկերութիւնը: Ո՞վ չի գիտեր, որ յանձնառութիւն մը ստանձնելը դիւրին բան

«Մարդուն հոգին պէտք է աճի ներելու իր փորձառութեան մէջ...»

«Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէ՛ք դուք անոնց...»

The **SOURP HAGOP** Church Executive Board  
 Welcomes You to our 3<sup>rd</sup> Annual  
 Palm Sunday Family Event

An activity for the whole family  
**Saturday, April 4, 2009 from 4-6 pm**  
 Armenian Community Center - Homenetmen Gamk Gym



**Games - Snacks**  
**Activities - Surprises**  
**Easter Bunny**

The event is for children  
 between the ages of 0-12

RSVP by March 30  
 514-331-5445 X 202  
 eglise58@sourphagop.com

**FREE ADMISSION**

**ՍՈՒՐՔ ՅԱՎՈՔ** Եկեղեցւոյ Գործադիր Մարմինը  
 կը հրաւիրո՞ծ ձեզ Ծաղկազարդի  
 իր 3-րդ տարեկան ընտանեկան հաւաքոյթին

**Ամբողջ ընտանիքին համար**  
**Շաբաթ, 4 Ապրիլ 2009, երեկ, ժամը 4-6**

- հաղեր
- խոտէլիքներ
- Ձատիկ Նապիկ
- Չեռային աշխատանք
- Անակնկալներ

Մասնաւորաբար 0-12 տարեկան երեխաներու համար

Կը խնդրուի մինչեւ 30 Մարտ 2009 տեղերը ապահովել  
 հեռաձայնելով՝ 514 331 5445 X 202 քիւփն  
 կամ գրելով՝ eglise58@sourphagop.com ե-huaguphin:

**ՍՈՒՏԵՐ ԱՉԱՏ**

ՄՈՒՐԱ ՅԱՎՈՔ  
 ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

**50-ԱՄԵԱԿԻ  
 ՅՈՒՐԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ**

Հուսարողութեամբ՝  
**Տ. ԽՈՍԵՎ ԱՐԷ. ՅԵՐՈՆԻՄ**  
 (Առաւոր Գեղեսյոյ Հայոց Թատր)

Նախագահութեամբ՝  
**Տ. ԵՐ ՏՐԱ. ԳԵՐՈՎ ԵՒ ԱՐԱՅՐ ՕՇԵՆԵՆ**

Կանաչաբոսութեամբ՝  
**ԵՆԱՆՅՈՅ ԳՈՐԾՈՐ ՄԵՐՈՒՆԱ**

Խմբագրութեամբ ԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ  
**Ս. ՅԵՐՈՆ ԵՒ Ս. ԳԵՐՈՎ ԵՆԱՆՅՈՅՐԱՆՈՒ**  
**ՄՐՁՅԱՅՂ ԵՐՁՅՈՒՄԱՆԵՐ**  
 Խմբավար՝  
**Տ. ՀՐԻՊ Լ. ԲԵՂ. ՆՍՊՈՒՅԱՆ**  
 Օգնական Խմբավար՝  
**ՏՐԱ. ՅԵՐՈՒ ԻՆՃԻՄՈՒՅԱՆ**  
 Մեներգութեամբ ԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ  
**ՏՐԱ. ՅԵՐՈՒ ԳԵՄՄՈՒՅԱՆ (Soprano)**  
**ՊՐԱ. ԱՐՄՈՒՅԱ ՄԵՐՈՒՅԱՆ (Baryton)**

Կիրակի, 29 Մարտ 2009-ի երեկոյեան ժամը 7.00-ին  
 «Վայր» Cathédrale St-Sauveur  
 10025 Boul. De L'Acadie  
 Montréal, QC

**ՄՈՒՏԵՐ ԱՉԱՏ Է**

չէ, այլ նեղութիւն կրել է: Անոնք որ երկնաւոր  
 Հօր կ'աղօթեն, ըսելով. «Թող գայ արքայու թիւնդ,  
 Թող կատարուի քու կամքդ»՝ իրենք իրենց  
 անձերը կը նուիրեն երկինքի արքայութեան  
 երկրի վրայ հաստատումի աշխատանքին, այլ  
 խօսքով՝ կը գործեն այնպէս՝ որ Աստուծոյ  
 կամքը կատարուի: Եւ այս ընթացքը նեղութիւն  
 կ'ենթադրէ:

«Նեղ դուռը» գրկանքի կեանքն է՝ յօգուս  
 ուրիշներու: Ան ճիգ եւ տքնութիւն կ'ուզէ:

Աստուած մեզ տնտեսներ կարգեր է: Մեր  
 կոչումն է մեր շրջապատին մէջ բարիք բաշխել  
 կամ բարեգործութիւն կատարել: Այդ կոչումին  
 իրագործումը դժուար է, սակայն ան որ կը  
 յաջողի՝ Աստուծոյ հաւատարմութեան պսակը  
 կ'առնէ: Եւ հաւատարմութեան պսակը՝ երկինքի  
 արքայութիւնն է:

Իսկ ի՞նչ է «լայն դուռ» ըստածը:  
 «Լայն դուռ»ը կորուստի տանող դուռն է:  
 Երբ Յիսուս «կորուստ» կ'ըսէր՝ ի՞նչ կը  
 հասկնար:

Մատթէոսի 10-րդ գլխուն մէջ կը կարդանք,  
 թէ երբ Յիսուս տասներկու առաքեալները կը  
 ղրկէ անոնց կը պատուիրէ, որ երթան Իսրայէլի  
 կորսուած ոչխարներուն քարոզեն, անոնց  
 հիւանդները բժշկեն, բորոտները մաքրեն,  
 չար ոգիները հանեն: Իսկ իր պատուէրի  
 վերջաւորութեան՝ մերժուելու պարագային անոնց  
 ընկիւքը կ'ըսէ այսպէս. «Եւ եթէ տան մը կամ  
 քաղաքի մը բնակիչները ձեզ չընդունին եւ ձեր

խօսքը չլսեն, այդտեղէն ելլելու ատեն ձեր ոտքի  
 փոշին թօթուեցէք: Գիտցէք, որ Դատաստանի օրը  
 Սողոմի եւ Գոմորի բնակիչներուն պատիժը աւելի  
 թեթեւ պիտի ըլլայ, քան թէ այդ քաղաքները» (Մտ  
 10:14): Ուրեմն, կորուստի գաղափարը աշխարհի  
 վախճանին եւ Դատաստանին  
 կը կապէր Յիսուս:

Եբրայեցիներու նամակին  
 մէջ հետեւեալը գրուած  
 է. «մի՛ կորսնցնէք ձեր  
 վստահութիւնը, որովհետեւ  
 անիկա մեծապէս պիտի  
 վարձատրէ ձեզ: Պէտք է  
 համբերել գիտնաք, որ-  
 պէսգի Աստուծոյ կամքը  
 կատարելով՝ իր խոստումին  
 տիրանաք: Որովհետեւ

Պէտք է  
 համբերել  
 գիտնաք,  
 որպէսզի  
 Աստուծոյ  
 կամքը  
 կատարելով՝  
 իր  
 խոստումին  
 տիրանաք:

Շատ, շատ քիչ ատենէն՝  
 ան որ գալիք է՝ պիտի գայ, առանց ուշանալու:  
 Այն ատեն, - կ'ըսէ Տէրը, -  
 ինծի վստահած արդար մարդը  
 իր հաւատով պիտի փրկուի.  
 բայց ինձմէ երես դարձնողը  
 նկատի պիտի չառնեմ» (Եբր 10:35-38): Արդ,  
 կորուստը Աստուծոյ կողմէ նկատի չառնուելն է,  
 եւ ենթարկումն է Սատանայի կամքին:

(Շարունակելի 29)

## ԵՐԵՄՆՈՐԵԱԿ

- Երեբժարթ, 24 Մարտ 2009**  
 20.00 «Զեկոյց՝ Ազգային Ընդհանուր  
 Ժողովի մասին»
- Չորեբժարթ, 25 Մարտ 2009**  
**Մեծ Պաշար ԼԱ. օր**  
 19.00 Հսկումի ժամերգութիւն  
 Խորհրդածութիւն՝ Ճաշակենք  
 «Հաւատով Խոստովանիմ»ը Ե.
- Հրագժարթ, 26 Մարտ 2009**  
**Մեծ Պաշար ԼԲ. օր**  
 11.00 Արեւազալի ժամերգութիւն  
 Խորհրդածութիւն՝  
 «Հաւատով Խոստովանիմ»ը Դ.
- Կրրաւր, 29 Մարտ 2009**  
**Գալստեան Կրրաւր**  
 09.30 Ժամերգութիւն  
 11.00 Ս. Պատարազ
- Չորեբժարթ, 01 Ապրիլ 2009**  
**Մեծ Պաշար ԼԸ. օր**  
 19.00 Հսկումի ժամերգութիւն  
 Խորհրդածութիւն՝ Ճաշակենք  
 «Հաւատով Խոստովանիմ»ը Զ.
- Հրագժարթ, 02 Ապրիլ 2009**  
**Մեծ Պաշար ԼԹ. օր**  
 11.00 Արեւազալի ժամերգութիւն  
 Խորհրդածութիւն՝  
 «Ողջախոսութիւն»ը
- Հաբաթ, 04 Ապրիլ 2009**  
**Ծաղկաջարդի Անխօրեալ**  
 16.00 Ընտանեկան հաւաքոյթ
- Կրրաւր, 05 Ապրիլ 2009**  
**Ծաղկաջարդ**  
 09.30 Ժամերգութիւն  
 11.00 Ս. Պատարազ  
 13.00 Մանուկներու թափօր  
 16.00 Դոնբացէք
- Առաջ Երեբժարթ, 07 Ապրիլ 2009**  
 19.00 Երեկոյեան ժամերգութիւն
- Առաջ Հրագժարթ, 09 Ապրիլ 2009**  
 10.30 Ս. Պատարազ  
 18.00 Կարգ ոտնլուալի  
 21.00 Կարգ խաւարման
- Առաջ Ուրբաթ, 10 Ապրիլ 2009**  
 19.00 Կարգ խաչելութեան եւ թաղման
- Առաջ Հաբաթ եւ Ծրագալոյց, 11 Ապրիլ 2009**  
 17.30 Ս. Գրային ընթերցումներ  
 18.30 Ս. Պատարազ
- Կրրաւր, 12 Ապրիլ 2009**  
**Ս. Զատիկ**  
 09.30 Ժամերգութիւն  
 11.00 Ս. Պատարազ
- Երկուբժարթ, 13 Ապրիլ 2009**  
**Յիւսուս Մեռելոց**
- Երեբժարթ, 14 Ապրիլ 2009**  
 19.00 Երիտասարդական գրոյց՝  
 «Կենսոյրարթի գիտութիւնն ու կրօնը»
- Կրրաւր, 19 Ապրիլ 2009**  
 09.30 Ժամերգութիւն  
 11.00 Ս. Պատարազ



Ս. ՅԱԿՈԲ  
 ԲՐԱՏՏՈՒՆԵԱԿԱՆ ԴԵՄՏՐԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՐԸ  
 ԿԸ ԵՆԿՎԱՅՆԷ

**Զեւոյց՝  
 Առաջին Ընդհանուր Ժողովի Մասին**

Զեւոյցներ՝  
**Գր. Տ. Խաթալ Ս. Արք. Յակոբեան**  
 Անջալոյ Գաւառի Հայոց Թեմի

Տեւաղութեան Յոթնորոտիան  
 Վեթանայ Տեղեկագիր  
**Առա. Կեորուսեան Վարդուհան**  
 Կրօնական Ժողով

Երեբժարթ 24 Մարտ 2009-ին  
 Ժամը 20:00-ին  
 Մոսթօւլի Հայ Կեորուհ Աւարուսեան սրահ



**ՀԱԿՈՒԻԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**  
**Ճաշակենք «ՀԱՄՏՈՎ**  
**Խոստովանիմ»ը,**  
**17-20 ՀԱՄԱՐՆԵՐ՝**  
**ԿԸ ԽՈՐՀՐԴԱԾԷ**

**Պրն. Կարօ**  
**ՆՈՒՆՈՒՏԵԱՆ**

**Չորեբժարթ, 25 Մարտ 2009**  
**Երեկոյեան Ժամը 7.00-ին**

**ԱՐԵՒԱԳԱԼԻ**  
**ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**  
**Ճաշակենք «ՀԱՄՏՈՎ**  
**Խոստովանիմ»ը**  
**13-16 ՀԱՄԱՐՆԵՐ՝**  
**Տիւ. Ալիս**  
**ՊԱՅՐԱՔՏԱՐԵԱՆ**

**Հրագժարթ, 26 Մարտ 2009**  
**Առախօսեան Ժամը 11.00-ին**